



Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմ
Western Diocese of the Armenian Church of North America

**ԻՆՉՈ՛Ւ ԵՆՔ
ԵԿԵՂԵՑՈՒՄ
ՄՈՄ ՎԱՌՈՒՄ**



**WHY DO WE LIGHT
A CANDLE
IN THE CHURCH?**

Պատրաստեց՝
ԳԵՈՐԳ ՍԱՐԿԱԿՎԳ ԳԵՈՐԳԵԱՆ

Prepared by
DEACON GEVORK GEVORKIAN

ԵՐԵՒԱՆ 2023



Տպագրուած է «Red Point» ՍՊԸ-ի տպարանում:



Սոյն գրքոյկը կը հրատարակուի ազնիւ մեկենասութեամբ՝

ԱՆԱՀԻՏ, ԹՕՆԻ, ԼԻՍԱ ԹԻԲԻԲՆԵԱՆՆԵՐԻ

Ի յիշատակ իրենց սիրեցեալ ամուսնոյն եւ հոր

ԳՐԻԳՈՐ ՍԱՐԿԱԿԱԳ ԹԻԲԻԲՆԵԱՆԻ



This publication was made possible through the generous
contribution of

ANAHID, TONY, LISA TUTUNJIAN

In loving memory of their husband and father


DEACON GRIGOR TUTUNJIAN

ՄՐՏԻ ԽՕՍՔ

Մեր Մայր Եկեղեցւոյ հաւատացելոց համար յիրաւի սպասուած աշխատութիւն մը պիտի ըլլայ «Ինչո՞ւ ենք եկեղեցում մոմ վառում» գրքոյկը, որ խնամքով պատրաստած եւ հրատարակութեան ներկայացուցած է Բարշ. Գեորգ Սրկ. Գեորգեանը: Ինչո՞ւ մոմ կը վառենք եկեղեցւոյ մէջ. այս հարցը իր զանազան դրսեւորումներով մշտապէս կ'արծարծուի եկեղեցի յանախողներու մօտ, եւ հոգեւոր սպասաւորը պարտականութիւն ունի լուսաբանելու անոր հոգեւոր հայեցակէտը՝ սկսելով սուրբգրային պատգամով. «Քու խօսքդ ճրագ է իմ ոտքերուս...» (Սաղմ. 118):

Կասկած չկայ, որ գրքոյկի էջերուն մէջ ներկայացուած բացատրականները պիտի գրաւեն ընթերցողի ուշադրութիւնը, բազմաթիւ հարցականներ փարատեն, եւ նիւթերու ընթերցումը եւ ծանօթացումը շատ օգտակար պիտի ըլլայ մեր հաւատացեալներուն՝ զանոնք լուսաւորելու, «Քրիստոսի Լոյսին մէջ» քալելու տեսակէտէն:

Օրհնութեամբ՝

Յովնան Արք.

Տ. Յովնան Արք. Տէրտէրեան
Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի
Արեւմտեան Թեմի

Մայիս, 2023

ԻՆՉՈՒՒՆ ԵՆՔ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՄՈՍ ՎԱՌՈՒՄ

Եկեղեցում մոմ վառելու ծիսական սովորոյթը մեզ է հասել դեռեւս Եկեղեցու կազմաւորման նախնական շրջանից: Մոմավառութեան ծագումը դեռեւս Յին Կտակարանի ժամանակներից է: Այն ժամանակ նաւթի եւ ձիթապտղի նոր ճգմած մաքուր ձիթափղ էին վառում տաճարում, **«որպէսզի մշտավառ ճրագ լինի վկայութեան խորանում»** (Ելք 27, 21: 40, 23-24):

Յին Կտակարանում, երբ երկրի վրայ կառուցուեց Աստծու առաջին տաճարը, արարողութիւնները տեղի էին ունենում կանթեղներով, աշտանակներով կամ ճրագամաններով: Աստուած Մովսէսին պատուիրեց. **«Իսրայէլի որդիներին պատուիրի՛ր, որ լուսաւորութեան համար ձիթապտղի նոր ճգմած մաքուր ձիթափղ բերեն քեզ, որպէսզի կանթեղը միշտ վառ մնայ վկայութեան խորանի մէջ, վարագոյրի դրսի կողմը: Ահարոնն ու նրա որդիները երեկոյից մինչեւ առաւօտ այն տեւապէս թող վառ պահեն Տիրոջ առաջ: Դա յաւիտենական օրէնք թող լինի ձեզ համար ձեր սերունդների մէջ: Տիրոջ առաջ, սուրբ աշտանակի վրայ մինչեւ առաւօտ վա՛ռ պահեցէք կանթեղները»** (Դեւտ. 24, 2-4).

Լոյսի թեման անցնում է ողջ Աստուածաշնչով, եւ Յին Կտակարանի պաշտամունքի հէնց սկզբից յատուկ պատրաստուած ճրագները դառնում են խորանի, իսկ ակեղի ուշ՝ Երուսաղէմի տաճարի համար անհրաժեշտ պատկանելիութիւնը: Աստուած Ինքն էր կարգել խորանի վրայ տեղադրուած աշտանակները. **«Ներս կը տանես աշտանակը, դրա վրայ կը դնես նրա ճրագամանները...**

Աշտանակը դրեց վկայութեան խորանի մէջ, սեղանի դիմաց, խորանի հարաւային կողմից: Երազամանները դրեց դրա վրայ, Տիրոջ առաջ, ինչպէս Տէրն էր հրամայել Մովսէսին» (Ելք 40, 5.23-24): **«Նրանք Տիրոջ համար վառում են ոսկէ աշտանակներն ու ճրագները, որ երեկոները լուսաւորեն»** (Բ. Մնաց. 13, 11):

Հին Կտակարանի բոլոր խորհրդանշները մատնանշում էին Յիսուսին: Հետեւելով Հին Կտակարանի տաճարի օրինակին՝ մոմավառութիւնն անկասկած ներառուեց Նոր Կտակարանի Եկեղեցում: Կանթեղներն ու մոմերը վառուում են Եկեղեցու բոլոր արարողութիւնների ժամանակ: Պօղոս առաքեալն ընդգծում է դրա սրբութիւնը. **«Առաջին խորանը պատրաստուեց այսպէս. նրա մէջ կային աշտանակը, սեղանը եւ առաջաւորութեան հացը. այս մասը կոչւում է Սրբութիւն»** (Եբր. 9, 2):

«Գործք Առաքելոցի» մէջ նշուում են առաքեալների ժամանակաշրջանում Եկեղեցում լապտերներ վառելու մասին: Այսպէս, Տրովադայի վերնատանը, որտեղ Քրիստոսի հետեւորդները հաւաքուում էին կիրակի օրը՝ հացը կտրելու, այսինքն՝ Սուրբ Պատարագ մատուցելու համար, բազմաթիւ լապտերներ կային. **«Եւ այն վերնատանը, ուր հաւաքուած էինք, բազում լապտերներ կային»** (Գործք 20, 8): Լապտերների մեծ թուի մասին այս յիշատակումը նշանակում է, որ դրանք օգտագործուել են ոչ թէ պարզապէս լուսաւորութեան, այլ իրենց հոգեւոր նշանակութեան համար:

Նոր Կտակարանի ծիսակատարութիւնը աստիճանաբար ձեւաւորուեց Եկեղեցում: Եկեղեցու կանոնադրութիւնն ամրագրեց լապտերների (այդ թւում՝ մոմերի) գործածութիւնը Սուրբ Պատարագի եւ օրուայ ժամակարգերի այլ արարողութիւնների ընթացքում:

Եկեղեցու Հայրերն անդրադարձել են մոմավառութեան հոգեւոր նշանակութեանը: Վաղբրիստոնէական նշանաւոր աստուածաբան Տերտուղիանոսը գրում է. «Մենք երբէք չենք մատուցում երկրպագութիւն առանց լապտերների: Բայց մենք դրանք օգտագործում ենք ոչ միայն գիշերուայ խաւարը ցրելու համար, այլեւ օրուայ լոյսի ներքոյ Սուրբ Պատարագ մատուցելու ժամանակ. որպէսզի սրա միջոցով պատկերացնենք Քրիստոսին՝ Անստեղծ Լոյսը, առանց որի մենք Նոյնիսկ օրուայ կեսին կը թափառէինք խաւարի մէջ» (Works, 3rd ed., Kiev, 1915, p.76.):

Երանելի Հերոնիմը 4-րդ դարում գրում է. «Բոլոր արեւելեան եկեղեցիներում մոմեր են վառւում Նոյնիսկ ցերեկային ժամերին, երբ պէտք է կարդալ Աւետարանը, իրականում ոչ թէ խաւարը ցրելու համար, այլ որպէս ուրախութեան նշան... լոյս՝ զգալու այն Լոյսը, որի մասին մենք կարդում ենք Սաղմոսներում. **«Քո խօսքը ճրագ է իմ ոտքերի համար, եւ լուսաւորում է իմ շաւիղները»** (Սաղմ. 118, 105)» (Works, part IV, 2nd ed., Kiev, 1900, pp.301-302):

Ի պատասխան հերձուածողների մեղադրանքներին, ովքեր ուղղադաւաններին նախատում էին ցերեկային ժամերին եկեղեցում մոմ վառելու համար, սուրբը նաեւ ասում էր. «Արեւելեան բոլոր եկեղեցիներում Աւետարանի ընթերցման ժամանակ մոմեր են վառւում ոչ միայն լոյսն սփռելու եւ մռայլութիւնը ցրելու համար, այլեւ հոշակելու անձնական ուրախութիւնը»:

Վառուած մոմերը, ջահերն ու կանթեղները Հայ եկեղեցում խորհրդանշական եւ հոգեւոր յատուկ նշանակութիւն ունեն: Մոմավարութիւնը քրիստոնէական բարեպաշտական սովորութիւն է: Այն տոգորուած է խորը իմաստով եւ անօտարելի է եկեղեցու աստուածային արարողութիւններից եւ բարեպաշտութիւնից: Բացի

այդ, իւրաքանչիւր քրիստոնեայի կողմից իր վառած մոմի համար տրուած փոքրիկ զոհաբերութիւնը իրականօգուտ է բերում Եկեղեցուն:

Մոմ վառելով իւրաքանչիւր քրիստոնեայ աւելի սերտ կապի մեջ է մտնում Եկեղեցու հետ՝ աւելի գործնականօրէն մասնակցելով արարողութեանը եւ անտեսանելիօրէն ջերմացնելով իր հոգին մոմի տեսանելի լոյսով: Մենք պէտք է հասկանանք, որ մարդու անմահ հոգին բնակւում է մարդու մահկանացու մարմնում: Ամահ հոգին չի կարող անտարբեր լինել մարմնի կողմից կատարուող բարեպաշտ գործողութիւնների նկատմամբ: Ինչպէս մարմինն է խոնարհւում, այնպէս էլ հոգին է խոնարհւում նրա հետ եւ դառնում հնազանդ: Որպէս մարդ արարած, մենք պէտք է տեսնենք, զգանք եւ լսենք զանգերի ղողանջը, խունկի բուրմունքը. եւ իւրաքանչիւր սրբապատկերից Փրկիչն Ինքը, Աստուածամայրը եւ բոլոր սուրբերը խորհրդաւոր կերպով նայում են մեզ, եւ մենք նայում ենք նրանց սուրբ պատկերներին, ինչպէս երկու աշխարհներ դեմ առ դեմ՝ Աստծու Արքայութեան բնակիչները եւ մենք՝ մեղաւորներս: Հետեւաբար, մարդը որպէս մարմնաւոր արարած, յաճախ կարիք ունի իր կրօնական զգացմունքներն արտայայտելու նաեւ ֆիզիկական ինչ-որ գործողութեամբ: Եւ ահա այդ արտայայտման ձեւերից մէկն էլ Եկեղեցում մոմավառութիւնն է, ինչպէս օրինակ, Սուրբ Գիրք կամ խաչը համբուրելը, խաչակնքուելը եւ այլն: Սակայն այստեղ կարելոր է ոչ թէ գործողութեան ձեւային կողմը, այլ թէ մարդ ինչ է զգում այն կատարելով:

Այսպիսով, Եկեղեցու բոլոր արարողութիւնների ժամանակ վառւում են մոմեր ու ճրագներ, որոնք բոլորն էլ ունեն բազմազան հոգեւոր եւ խորհրդանշական իմաստներ, **«որովհետեւ Աստուած է, որ ասաց. «Խաւարից թող**

լոյս ծագի». **Եւ նա ծագեցրեց մեր սրտերում Աստծու փառքի գիտութեան լոյսը, որը ճառագայթում է Յիսուս Քրիստոսի դէմքից»** (Բ. Կորնթ. 4, 6):

Արդ տեսնենք, թէ որո՞նք են Եկեղեցում մոմավառութեան հոգեւոր եւ խորհրդանշանային իմաստները.

❖ Եկեղեցում մեծ կարեւորութիւն ունի լոյսի խորհրդաբանութիւնը: Նախ՝ մովը, ճրագը, լապտերը, կանթեղը առաջին հերթին, Աստծու ներկայութեան խորհրդանիշն է: **«Դ՛՛՛՛՛ Ես իմ ճրագը, ՏԷ՛՛՛՛՛ Եւ Դ՛՛՛՛՛ Ես լուսաւորելու իմ խաւարը»** (Բ. Թագ. 22, 29): Յոբն ասում էր. **«Լուսաւոր էր նրա ճրագը իմ գլխի վերեւ, երբ Նրա լոյսով էի ընթանում խաւարի միջով»** (Յոբ. 29, 3): Լոյսի բաժանումը խաւարից արարչագործութեան առաջին գործողութիւններից էր:

Սրբերը շատ էին խօսում Եկեղեցու մէջ մոմավառութեան խորհրդանշական նշանակութեան մասին: Եկեղեցու աւանդոյթի համաձայն, լոյսը խորհրդանշում է Քրիստոսին. **«Ես եմ աշխարհի լոյսը. ով իմ յետեւից է գալիս, խաւարի միջով չի քայլի, այլ կ'ընդունի կենաց լոյսը»** (Յովհ. 8, 12): Տէրն աշխարհի Լոյսն է, եւ առանց Քրիստոսի մենք թափառում ենք խաւարի մէջ նոյնիսկ օրուայ լոյսի ներքոյ: Ժամանակների վերջում, երբ փրկութեան պատմութիւնն աւարտուի, Աստուած Ինքն է լինելու Լոյսը նոր ստեղծագործութեան: **«Եւ քաղաքին պէտք չէին արեգակ ու լուսին, որպէսզի լուսաւորեն այն. քանզի Աստծու փառքն էր լուսաւորում քաղաքը ամեն ժամ, եւ Գառը ճրագ էր նրա մէջ»** (Յայտ. 21, 23):

Վառուող մովի լոյսը խորհրդանշում է նաեւ Սուրբ Երրորդութիւնը. «Աստուած յԱստուծոյ, Լոյս ի Լոյս...» (Nicene Creed): «Լոյս, երեակ եւ անբաժանելի Սուրբ

Երրորդութիւն...» (Լոյս, Արարիչ Լուսոյ, Արեւագալի Ժամերգութիւն):

❖ Վառուող լոյսը սահմանում է կեանքը: Արարչագործութեան պատմութեան մէջ Աստուած ասաց **«Թող լինի լոյս»** (Ծննդ. 1, 3): Կեանքն սկսուեց Նրա լոյսով: Վառուող մոմը ներկայացնում է հաւատացեալի ողջ կեանքը՝ ծնունդից մինչեւ մահ: Նաեւ ներկայացնում է Աստծու հանդէպ սիրոյ եւ նուիրուածութեան ներքին բոցը: Քրիստոնեան պետք է մոմի պէս վառուի Աստծու առջեւ, եւ Նրա ողջ եութիւնը պետք է աստիճանաբար այրուի աստուածային սիրոյ բոցով եւ այդպիսով նշանաւորի իր երկրային կեանքի ավարտը: Մոմավառութիւնը հաւատացեալին ջերմութիւն է տալիս: Եւ այստեղ կրկին կայ երկկողմանի վերաբանութիւն: Սա է՛լ Արարչի սիրոյ ջերմութիւնն է Իր արարչութեան հանդէպ, է՛լ Նրան ուղղուած մեր աղօթքի ջերմութիւնը: Մոմը փափուկ նիւթ է, որ խորհրդանշում է Աստծու կամքին մեր ենթարկուածութիւնն ու հնազանդութիւնը եւ յանուն Նրա կեանքը փոխելու մեր պատրաստակամութիւնը: Այրուելով՝ մոմը վերածւում է կրակի, եւ Աստուածային սիրոյ լոյսի ու ջերմութեան ազդեցութեամբ մենք կարող ենք հասնել բոլորովին նոր անբացատրելի վիճակի՝ սրբութեան:

❖ Եկեղեցու մոմերը, ճրագներն ու լապտերները պայծառ լոյսի աղբիւր են: Լոյսի թեման անցնում է ողջ Աստուածաշնչով, եւ Հին Կտակարանի պաշտամունքի հէնց սկզբից յատուկ պատրաստուած ճրագները դառնում են խորանի, իսկ ակելի ուշ՝ Երուսաղէմի տաճարի համար անհրաժեշտ պատկանելիութիւնը: Բացի իրենց գործնական նպատակից, Եկեղեցու մոմերը, ճրագներն ու լապտերները խորհրդանշում են հաւատացեալի հոգեւոր բարձունքը, որի շնորհիւ հաւատքի լոյսը շողում է ողջ աշխարհի վրայ: Լոյսի բաժանումը խաւարից

արարչագործութեան առաջին գործողութիւններից էր: Ժամանակների վերջում, երբ փրկութեան պատմութիւնն աւարտուի, Աստուած Ինքը կը լինի Լոյսը Նոր ստեղծագործութեան (տե՛ս Յայտ. 21, 23): Ինչպէս մոմերն այրուելով լուսաւորում են շրջապատը, այնպէս էլ քրիստոնեան, առաջնորդուելով Յիսուսի պատգամով՝ **«Դո՛ւք էք աշխարհի լոյսը»** (Մատթ. 5, 14) ձգտում է ճշմարիտ, քրիստոնեականացել կեանք ապրելով լուսաւորել իր շրջապատը. **«Մի քաղաք, որ լեռան վրայ է կանգնած, չի կարող թաքնուել: Եւ ճրագ վառելով կայսայի տակ չեն դնում, այլ՝ աշտանակի վրայ, եւ նա լոյս է տալիս բոլոր նրանց, որ տան մէջ են: Թող այդպէս փայլի ձեր լոյսը մարդկանց առաջ, որպէսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառաւորեն ձեր Յօրը, որ երկնքում է»** (Մատթ. 5, 15-16):

Աշխարհում լոյսը կարող է լինել շատ փոքր, որքան հեռաւոր աստղի փայլն է կամ էլ այնքան պայծառ, ինչպէս մեծ խարոյկն է: Յիշենք, որ ամէն անգամ, երբ մենք լոյս ենք բերում, խաւարը նուագում է եւ լոյսը տարածւում ամենուրեք: **«Ոչ ոք ճրագ վառելով ծածուկ տեղ չի դնի, այլ կը դնի աշտանակի վրայ, որպէսզի մտնողը լոյս տեսնի»** (Դուկ. 11, 31. Մարկ. 4, 21-23. Մատթ. 5, 15): Քրիստոնեաները Քրիստոսի լոյսն են թանկագին, եւ իհարկէ, պաշտպանութեան կարիք ունեն, ինչպէս մոմն է լապտերի մէջ պաշտպանուած, համարձակ եւ անկասելի է: **«Մարդու հոգին Տիրոջ լոյսն է, որը քննում է սրտի շտեմարանները»** (Առակ. 20, 27): Մենք լոյսի փոքրիկ նշաններն ենք՝ սիրոյ, յոյսի, ուրախութեան եւ երախտագիտութեան այդ փոքրիկ ճառագայթները, որոնք ուղարկուել են աշխարհ՝ բարիք գործելու եւ աշխարհին յիշեցնելու Իմանալի Լոյսի մասին: Մոմավառութիւնը յիշեցնում է Չմարող Լոյսը, որը երկնքի Արքայութեան մէջ

ուրախացնում է Աստծուն հաճոյացած արդարների հոգիները:

❖ Եկեղեցին Աստծու տունն է եւ այնտեղ մոմ վառելով մենք լուսաւորում ենք Տիրոջ տաճարը, հաւատալով, որ Քրիստոս կեանքի եւ Իր կենդանի Լոյսով կը լուսաւորի մեր հոգու տաճարը, որպէսզի չլինենք երբէք խաւարի որդիներ, այլ Յիսուսի կամքով՝ Լոյսի որդիներ: Հաւատքն առանց խորհրդանշանների չի լինում, ինչպէս ադամական մեղքից մաքրուելու համար հարկաւոր է ջրի լուացում, ինչպէս մեղքերից ազատուելու համար հարկաւոր է Փրկչական Գառան գենումը, այնպէս էլ մոմը մեր Փրկչի Լոյսի խորհրդաւոր առկայութիւնն է արտաքին եւ ներքին կեանքից ներս:

❖ Եկեղեցում դրուած մոմերը հաւատացեալների՝ Աստծու հանդէպ սիրոյ եւ պաշտամունքի, Նրան մատուցած զոհաբերութեան եւ միեւնոյն ժամանակ հաւատացեալների ուրախութեան ու Եկեղեցու հոգեւոր յաղթանակի արտայայտութիւնն են: Մոմավառութիւնը յիշեցնում է Չմարող Լոյսը, որը երկնքի Արքայութեան մէջ ուրախացնում է Աստծուն հաճոյացած արդարների հոգիները:

❖ Վառուած մոմը խորհրդանշում է Աստծու փառքի գիտութեան ծագումը հաւատացեալների սրտերում, **«որովհետեւ Աստուած է, որ ասաց. «Խաւարից թող լոյս ծագի».** **Եւ նա ծագեցրեց մեր սրտերում Աստծու փառքի գիտութեան լոյսը, որը ճառագայթում է Յիսուս քրիստոսի դէմքից»** (Բ. Կորնթ. 4, 6):

❖ Խորանի վրայ կանոնաւոր կերպով դասաւորուած աշտանակներն ու մոմերը խորհրդանշում են լուսեղէն ամպի մէջ երեւացող հրեղէն կառքը եւ հրեղէն ձիերը, որ Եղիա մարգարէին երկինք են բարձրացնում (տե՛ս Դ. Թագ. 2, 11):

❖ Խորանի վրայ վառուող մոմերի հուըը նաեւ ունի աշխարհի վերջում կրակի միջոցով դատաստանը կատարուելու եւ չարը պատժելու խորհուրդը, ինչպէս օրինակ, Եղիա մարգարէն երկնքից կրակ բերեց եւ ոչնչացրեց իրեն ձերբակալելու եկած երկու յիսնապետերին եւ նրանց յիսուն զինուորներին (տե՛ս Դ. Թագ. 1, 1-11):

❖ Եկեղեցում վառուող մոմի լոյսն ու կրակը ներկայացնում են Աստծու ներկայութիւնն ու զօրութիւնը, որը նման է հրեղէն սիւնին, որն առաջնորդում էր Իսրայէլի զաւակներին (տե՛ս Ելք 13, 21):

❖ Եկեղեցում աշտանակների վրայ վառուող մոմերը խորհրդանշում են փշի թուփը, որը վառուում էր, բայց չէր այրուում, եւ որի մէջ Աստուած երեւաց Մովսէսին (տե՛ս Ելք 3, 1-15): Անկէզ թուփը յատկապէս նախատիպն էր Աստուածամօր:

❖ Բոցակէզ մոմը աստուածային լոյսի մէջ մարդու ներգրաւուածութեան խորհրդանիշն է, եւ վկայում է մարդու հաւատքի, աստուածային լոյսին նրա պատկանելիութեան մասին: Մոմը՝ լինելով մաքուր, փափուկ, նուրբ, հաճելի բուրմուկ արծակող՝ այն քրիստոնեական հոգու խորհրդանիշն է, մեղքերից մաքրուած, սուրբ Աստուածային կամքին ենթարկուող եւ հոգեպէս բուրաւետ առաքինութիւններով զարդարուած: **«Արդարի լոյսը պիտի վառ լինի յարածամ, բայց ամբարիշտների լոյսը պիտի հանգչի»** (Առակ. 13, 9):

❖ Վառուող մոմը ներկայացնում է աղօթողին: Մոմի լոյսը խորհրդանշում է առ Աստուած պայծառ, ուրախ, ջերմ ու սրտաբուխ աղօթքը: Եկեղեցում վառուող մոմի բոցը՝ Տիրոջ, Աստուածածնի, Աստծու սուրբերի առջեւ վառուող աղօթքի եւ աղօթողի խորհրդանիշն է: Ցանկացած դիրքում մոմի բոցը բարձրանում է, ճիշդ

այնպես, ինչպես մեր աղօթքները շտապում են դեպի Աստուած: Վառուող մոմը կարող է լինել մեր քերական խնդրանքի կամ շնորհակալութեան արտայայտութիւնը: Վառուած մոմը խորհրդանշում է աղօթքի մատուցումը, որտեղ մենք ներկայացնում ենք մեր խնդրանքները Տիրոջը եւ խնդրում ենք սրբերին բարեխօսել մեզ համար: Կրակը միշտ վեր է բարձրանում, անկախ նրանից, թէ ինչպես է մոմը թեքուած: Ուստի մարդը, կեանքի ցանկացած հանգամանքներում, պետք է իր աղօթքի կոչը, մտքերն ու զգացմունքները դարձնի առ Աստուած: Աստուածապաշտութեան ժամանակ վառուող մոմի բոցը նշանակում է, որ աղօթողների սրտերը բոցավառուում են Աստծու հանդէպ սիրուց: Որքան շատ է լոյսը, այնքան ակեյի շատ է ուրախութիւնը: Ուստի, որքան հանդիսաւոր է եկեղեցական տօնը, այնքան շատ են վառուում մոմերը տաճարում:

❖ Մոմավառութիւնը ստեղծում է խորհրդաւոր եւ տպաւորիչ տեսարան: Սուրբերի պատկերների առջեւ վառուող բազմաթիւ մոմերը կարծես Աստծու առջեւ կանգնած հաւատացեալների հոգիները լինեն, որոնք վառուում են աստուածային սիրով՝ մոմի բոցի պէս միշտ դեպի վեր ձգտելով լուսաւոր խորհուրդներով:

❖ Վարուող մոմը ներկայացնում է Աստծու ընկերակցութեան մէջ մնալու մեր ցանկութիւնը, երբ մենք կատարում ենք մեր ամենօրեայ քրիստոնէական պարտականութիւնները թէ՛ եկեղեցում, թէ՛ տանը եւ թէ՛ աշխատավայրում: Քրիստոս՝ Լոյսի Աղբիւրը, գալիս է մեզ մօտ եւ միշտ ներկայ է լինում մեզ զօրացնելու, խրատելու, ոգեշնչելու եւ յոյս տալու:

❖ Մոմի բոցակէզ կրակը խորհրդանշում է յաւերժութիւնը: Քրիստոսի Լոյսը երբեք չի մարի, քանի դեռ մենք ապրում ենք հաւատքով, առանց կասկածի

ստուերի, որ խաւարը երբեւէ կը յաղթի մեզ: Երուսաղէմի պատրիարք սբ. Սոֆրոնիոսը 7-րդ դարում գրել է. «Աշտանակները եւ մոմերը ներկայացնում են Յաւերժական Լոյսը, ինչպէս նաեւ այն լոյսը, որը արտացոլում է արդարներից» (Writings of the Holy Fathers, St. Petersburg, 1855, Vol. I, p.270):

❖ Իւղակիր կանանց օրինակով մենք վառում ենք լոյսի ճրագը, որպէսզի եւս մէկ անգամ ականատես լինենք Յիսուսի Յարութեանը եւ Նրա փառքը արտացոլենք մեր կեանքում: Մենք լուսաւորում ենք յոյսով եւ յարութեան լոյսով, որի համար ապրում ենք՝ մեր կեանքը պսակելով յարութեան նոր կեանքով: Քրիստոսի Յարութիւնը լոյսն է, որ մխիթարում է մեզ եւ առաջնորդում մեզ մեր բոլոր փորձութիւնների ու դժուարութիւնների միջով: Ծիսական արարողութիւնների ժամանակ քահանայի կամ Աւետարան ընթերցող սարկաւազի երկու կողմում կանգնում են երկու մոմակիրներ, որոնք խորհրդանշում են Յիսուսի Յարութիւնը աւետող երկու լուսաւոր հրեշտակներին. **«Եւ տեսաւ երկու հրեշտակներ՝ սպիտակների մէջ, որոնք նստել էին՝ մէկը՝ սնարին, եւ միւսը՝ ոտքերի մօտ, այնտեղ, ուր Յիսուսի մարմինն էր եղել»** (Յովհ. 20, 12): Սա յիշեցնում է մեզ հետեւեալ սաղմոսները. **«Ըո խօսքը ճրագ է իմ ոտքերի համար եւ լուսաւորում է իմ շաւիղները»** (Սաղմ. 118, 105): **«Տիրոջ պատուիրանները լոյս են ու լոյս են տալիս աչքերին»** (Սաղմ. 18, 9):

❖ Մոմավառութիւնը խորհրդանշում է մոմ վառողների մաքրութիւնն ու անմեղութիւնը: Մոմը վառում է՝ որպէս նշան ապաշխարութեան, հաստատակամութեան, հաւատարմութեան եւ Աստծուն հնազանդուելու շարունակական պատրաստակամութեան: Մենք պետք է մերժենք ու հեռու մնանք մեղքի խաւարից, որովհետեւ, այտեղ, որտեղ մեղքի խաւարն է տարածուում, այնտեղ

մարում է Քրիստոսի հաւատքի ու սիրոյ կրակը: Մեղքի եւ տգիտութեան մեջ գտնուող մարդկանց կեանքը մթնշաղ է: Ուստի, մոմավառութիւնը խորհրդանիշն է այն բանի, որ մարդը մոմի պէս այրուելով՝ զոջում է իր մեղքերի համար եւ պատրաստ է հնազանդուել Աստծուն:

❖ Մոմավառութիւնը Ս. Ծննդեան ու Ս. Չատկի ճրագալոյցի խորհուրդն ունի: Որպէսզի ճրագալոյցը վերագտնի իր իմաստը մեր կեանքում, պէտք է վերարծարծենք Քրիստոսի հաւատքի ու սիրոյ կրակը մեր սրտում: Մոմավառութեամբ մենք յայտարարում ենք, որ ինչպէս Բեթղեհեմեան աստղի լոյսը մոգերին առաջնորդեց դէպի ճշմարիտ Լոյսը՝ Մանուկ Յիսուսը, այդպէս էլ թող մեզ առաջնորդի դէպի աշխարհի Փրկիչը: Իր լոյսի փայլով մոմը բշում է շուրջը գտնուող խաւարը: Յիսուս մանկան Ծննդեամբ ցրեց մեղքի ու տգիտութեան խաւարը: Մոմավառութիւնը խորհրդանշում է մեր սրտի լոյսն ու քերմութիւնն առ Աստուած: Մոմի այրումը կամ մոմը կրակի վերածելը, նշանակում է աստուածացում: Նշանակում է՝ կրակի գործողութեամբ եւ Աստուածային սիրոյ եւ շնորհի քերմութեամբ երկրային մարդու փոխակերպումը նոր արարածի: Մոմի կրակը խորհրդանշում է այն աստուածային լոյսը, որը Յիսուս բերեց աշխարհ: 3-4-րդ դարերի Եկեղեցական գործիչ եւ պատմիչ Եւսեբիոս Կեսարացին արձանագրում է. «Չատիկի տօնակատարութեան ժամանակ հաւատացեալների կողմից այնպիսի քանակութեամբ մոմ է վառում, որ գիշերն ինքնին ցերեկ էր դառնում: Կային մոմեր, որոնց չափսերը իրական սիւների տեսք ունէին» (https://www.tertullian.org/fathers/eusebius_on_easter.htm):

Ս. Ծննդեան եւ Ս. Չատկի ճրագալոյցին ներկայ եղող իւրաքանչիւր հաւատացեալի վառած մոմ է տրւում, որ իր հետ տուն տանի: Այն պիտի յիշեցնի իրեն՝ իր հաւատքի

կրակը վառ պահելու անհրաժեշտութիւնը: Միաժամանակ, մոմը վառելով, խոստովանում ենք, թէ մենք Քրիստոսով լուսաւորուած անձեր ենք, եւ ընդունում ենք Քրիստոսին ոչ միայն իբրեւ լոյսը աշխարհի, այլեւ՝ լոյսը մեր կեանքի:

❖ Մոմեր դրում են առողջութեան եւ խաղաղութեան համար: «Յոգեհանգստի համար» մոմը դրում է՝ հարգելու այլ աշխարհ մեկնած ննջեցեալի բարի յիշատակը: «Առողջութեան համար» մոմեր են դրում տարբեր առիթներով՝ ի նշան երախտագիտութեան ինչոր բանի համար, օգնելու դժուար որոշում կայացնելիս, լուրջ ճանապարհորդութիւնից առաջ, վտանգների ենթարկուելու պարագաներին, եւ այլն: Մոմերը վառւում են սրբավայրերում խորանի վրայ՝ նշանակելու Տիրոջ ներկայութիւնը Ս. Հաղորդութեան ժամանակ եւ հաւատացեալների կողմից ակնածանքի ու մեծարանքի կոչ անելու համար: Վառուող մոմը տեսանելի նշան է, որն արտայայտում է բուռն սեր, բարի կամք նրա հանդէպ, ում համար մոմը դրում է: Իսկ եթէ չկայ այս սերն ու բարի կամքը, ուրեմն մոմերը իմաստ չունեն, նուիրատուութիւնն իզուր է: Հետեւաբար, անհնար է մոմ դնել ձեւականօրէն եւ սառը սրտով: Արտաքին գործողութիւնը պէտք է ուղեկցուի աղօթքով, թէկուզ ձեր իսկ ամենապարզ խօսքերով: Չի կարելի սառը սրտով մոմ վառել, զուտ որպէս ձեւականութիւն:

❖ Մեր վառած մոմերը Նրա աստուածային շքեղութեան նշանն են, Ով գալիս է չարի մուկ ստուերները վտարելու եւ Իր յաւերժական լոյսի փայլով ողջ տիեզերքը շողալու: Վառուող մոմի հուրը խորհրդանշում է Քրիստոսի երկրորդ գալստեան ժամանակ այն հուրը, որ պիտի գնա Տիրոջ առջեւից, որպէսզի լուսաւորի սրբերին եւ բարեպաշտներին, իսկ չարերին ու անհաւատներին

սատանայի հետ յաւիտենական հրի դատապարտի: Մեր մոմերը ցոյց են տալիս, թէ որքան պայծառ պէտք է լինի մեր հոգին, երբ գնում ենք Քրիստոսին ընդառաջ:

❖ Տեառնընդառաջի նախատօնակի արարողութեան աւարտին կատարում է հանդիսաւոր Անդաստանի արարողութիւն, որի ընթացքում օրհնում են աշխարհի չորս ծագերը: Անդաստանին հաջորդում է մոմերի օրհնութեան արարողութիւնը: Եկեղեցու կանթեղներից վերցուած կրակով եկեղեցիների բակերում վառում են խարոյկներ՝ իբրեւ Քրիստոսի լոյսի խորհրդանիշ: Ըստ Սբ. Գրիգոր Տաթեւացու՝ կրակն ունի հետեւեալ խորհուրդը. «Ինչպէս Տիրոջը տաճարին ընծայելու ժամանակ ժողովուրդը ջահելով եւ կանթեղներով ելաւ Նրան ընդառաջ, մենք էլ նոյն օրհնակով կրակ ու ջահ ենք վառում եւ Տիրոջ գալստեան նախատօնակը կատարում: Խարոյկի հուրը բորբոքելով՝ Աստծու սիրոյ հուրն ենք խնդրում: Հեթանոսներն Աստծու պատիւը կրակին Էին մատուցում, իսկ մենք կրակը, որպէս Քրիստոսի ծառայ, բերում ենք Նրան ծառայեցնելու» (<https://www.kantsasar.com/news/14860-2/>):

❖ Մոմավառութիւնն արտայայտում է մեր սիրոյ բոցը Տիրոջ, Աստուածամօր, հրեշտակների եւ սուրբերի հանդէպ: Մոմերը վառում են սուրբերի սրբապատկերների առջեւ՝ ցոյց տալով մեր նուիրուածութիւնն ու ակնածանքը Նրանց հանդէպ, ովքեր արժանի են մեր երկրպագութեանն ու երախտագիտութեանը: Սուրբերի պատկերների առջեւ վառուող մոմերը մեզ յիշեցնում են, որ սուրբերն իրենց ժամանակաշրջանում լոյս են եղել մարդկանց: Նրանք այրուել եւ սպառել են ինչպէս մոմը, որպէսզի մարդկանց լուսաւորեն: Հաւատացեալները մոմ վառում են. ոչ թէ պաշտելու մոմանիւթը, այլ այն, ինչ այն իսկապէս ներկայացնում է: Լա՛ւ է սրբապատկերների

առջեւ մոմ դնելը, սակայն աւելի լաւ է, եթէ Աստծուն եւ մերձաւորի հանդէպ ընծայենք սիրոյ կրակը: Լաւ է, որ երկուսն էլ միաժամանակ լինեն: Եթէ մարդ մոմ է դնում, բայց իր սրտում չկայ սեր Աստծու եւ մերձաւորի հանդէպ, ապա զուր է նրա ընծայութիւնը Աստծուն:

❖ Սրբապատկերների առաջ մոմերի համար տեղադրուած աւազատեղին, երկար ժամանակ մոմերը վառ պահելով, անհատական աղօթքը երկարածգում եւ զօրացնում է այլ հաւատացեալների աղօթքների հետ մեկտեղ: Դրանով ստեղծում է աղօթքի հաւաքական ոգի ամբողջ Եկեղեցու համար, որը քաջալերող, հարստացնող եւ զօրացնող է: Եկեղեցում վառուող մոմերի աւազատեղին նայելը կարող է բաւականին յուզիչ լինել, քանի որ նոյնիսկ երբ դուք աղօթում եւ հեռանում էք, ձեր աղօթքները մնում են Եկեղեցում, իսկ յետոյ միւսները կարող են աւելի ուշ աղօթել այդ մոմերի վրայ:

❖ Ինչպէս մոմն է մեռած եւ խաւար առանց հրի, նոյնպէս՝ **«Հաւատքն առանց գործերի մեռած է»** (Յակ. 2, 26): Ինչպէս մոմն ու հուրն առանց պատրոյգի չեն վառուում, նոյնպէս էլ հաւատքն ու գործն առանց սուրբ Նպատակի անպիտան են: Նա, ով ունի հաւատք եւ Աստծու սիրոյ համար բարին է գործում, նա է արժանի Աստծու Արքայութեան եւ մեղքերի թողութեան: Վառուող մոմը խորհրդանշում է մեր աղօթքն ու ողորմութիւնը, որը մեր ձեռքով ընծայում ենք Քրիստոսին: Այն նաեւ մեր անձի փրկութեան խորհրդանիշն է, որովհետեւ «մոմն ինքնին հուր է, մոմանիւթ եւ պատրոյգ, նոյնպէս եւ մեզ երեք բան է հարկաւոր փրկութեան համար: Նախ՝ ճշմարիտ հաւատք, որ խորհրդանշում է մոմանիւթը: Երկրորդ՝ բարի գործեր, որ խորհրդանշում է հուրը: Երրորդ՝ ճշմարիտ եւ սուրբ Նպատակ, որ խորհրդանշում է պատրոյգը, եւ այն, որ ամէն բարի գործ Աստծու սիրոյ

համար ենք անում եւ ոչ թէ ի ցոյց մարդկանց: Եւ ինչպէս վառուող մոմը տարբերում է հանգած մոմից, այդպէս Էլ՝ կենդանի հաւատը մեռած հաւատից, որովհետեւ վառուող մոմից լոյս է ելնում, իսկ հանգածից՝ դառը ծուխ: Այդպէս Էլ կենդանի հաւատքից ելնում է ճշմարտութեան լոյս՝ լուսաւորելով մարդկանց ճանապարհը» (<http://www.surbzoravor.am/post/view/momavarutyun>):

❖ Հարկ է յիշել, որ մոմավառութիւնը Եկեղեցու խորհուրդներից չէ, որոնք եօթն են՝ Մկրտութիւն, Դրոշմ, Ապաշխարութիւն, Հաղորդութիւն, Պսակ, Վերջին Օծում կամ Կարգ Հիւանդաց եւ Ձեռնադրութիւն: Հետեւաբար՝ եթէ տարուայ մեջ մենք մի քանի անգամ ենք մտնում Եկեղեցի, առատօրէն մոմ վառում ու դուրս գալիս՝ շարունակելով մեր աշխարհիկ կեանքը մինչեւ յաջորդ այդպիսի այցը, ապա հոգեւոր տեսանկիւնից նման մոմավառութիւնը չի կարող արժէք ունենալ: Շատերն են Եկեղեցի մտնում միայն «մոմ վառելու» համար: Մոմ վառելը լաւ է, բայց ոչ պարտադիր անհրաժեշտութիւն եւ այն ոչ մի դէպքում չի կարող փոխարինել Սուրբ Պատարագին, Սուրբ Հաղորդութեանը եւ այլ խորհուրդներին մասնակցութեանը: Մեր մասնակցութիւնը Սուրբ Պատարագին ամենակարեւորն է: Մոմավառութիւնը թէեւ հաւատքից բխող քայլ է, սակայն եթէ քրիստոնեան Եկեղեցում մոմ վառի, բայց աղօթք չանի, ապա այն նոյնն է, ինչ խուսկն առանց հոտի կամ աղն առանց համի: Մոմը չի՛ աղօթի մեզ համար եւ չի՛ փոխարինի մեր անձնական աղաչանքներն առ Աստուած: Ուստի չքաւարարուենք միայն մոմ վառելով, այլ մասնակցենք առաւել կարեւոր՝ Ս. Պատարագի, առաւօտեան եւ երեկոյեան ժամերգութիւնների:

❖ Մոմավառութիւնը համեստ հանգանակութեան մի տարբերակ է, որովհետեւ մոմի համար մեր տուած

գումարով Եկեղեցին հոգում է իր զանազան ծախսերը եւ գուցէ նաեւ բարեգործական ծրագրեր իրականացնում: Եկեղեցում մոմ գնելը փոքրիկ զոհաբերութիւն է Աստծո՛ւ՝ ըստ Եկեղեցի եկող իւրաքանչիւրի աշխատասիրութեան եւ կարողութեան: Թող մեր հոգեւոր ջանքերի եւ երկրային այս իւրատեսակ զոհաբերութեան միութիւնը ուրախութիւն բերի ե՛լ մեզ, ե՛լ Արարչին:

❖ Մոմի մեծութիւնը կամ քանակը ամենեւին Էլ աւելի գթառատութեան նշան չէ, որովհետեւ Տէրը նայում է մարդու սրտի միտումին ու տրամադրութեանը: Աստծուն հաճելի է մոմի տեսքով նիւթական օժանդակութիւնը, բայց Տիրոջ համար մոմ վառելուց առաւել կարեւոր է սրտի այրումը: Պետք է յիշել, որ հոգեւոր կեանքը պէտք չէ սահմանափակուի սրբապատկերների մօտ մոմեր դնելով: Քրիստոնեայի կեանքի նպատակն է ձեռք բերել Սուրբ Զոգու շնորհը ապաշխարութեան միջոցով կրքերից մաքրուելը՝ աղօթքի եւ պահեցողութեան միջոցով:

❖ Եթէ մոմը դնելու ազատ տեղ չկայ, ապա պէտք չէ մարել տեղադրուած այլ մոմերը՝ ձերը տեղադրելու համար: Դուք կարող էք մոմը տալ սպասաւորին եւ ինդրել այն աւելի ուշ վառել: Նաեւ պէտք չէ տխրել ու վրդովուել, եթէ մեծ տօների ժամանակ սպասաւորը հանգցնի ձեր մոմը, որպէսզի միւսը դնի, կամ եթէ չայրուած մոմը հանգցնի ծառայութեան աւարտին: Ձեր զոհաբերութիւնն արդէն ընդունուել է Ամենատես ու Ամենագետ Աստծու կողմից, իսկ մոմերը, անկասկած, մինչեւ վերջ աւելի ուշ կը վառուեն:

❖ Խօսելով այն մասին, թէ ինչպէս ճիշդ դնել մոմը, արժէ սկսել նրանից, որ դա պէտք չէ վառուի մեքենայաբար կամ ինքնաբերական, այլ գիտակցութեամբ եւ սրտում սիրոյ զգացումով, թէ ում առջեւ է այն դրում: Երբ մոմ էք գնում Եկեղեցում, այն դառնում է ձեր

կամաւոր զօհաբերութիւնը, ձեր հաւատքի եւ սիրոյ խորհրդանիշը: Հետեւաբար, մոմավառութիւնը ծառայութեան մի մասն է, դա մեր անձի ընծայումն է Տէր Աստծուն, եւ ինչպէս անարժան, անհանգիստ պահուածքով չի կարելի խախտել Եկեղեցու կարգը, այնպէս էլ չի կարելի խառնաշփոթ ստեղծել՝ մոմն ամբողջ տաճարով անցկացնելով պաշտամունքի ժամանակ:

❖ Մոմերը ցանկալի է գնել միայն այն Եկեղեցում, որտեղ դուք եկել էք աղօթելու: Պէտք չէ մոմ բերել Եկեղեցի՝ գնուած աշխարհիկ խանութներից: Մոմը չի աղօթում մեզ համար կամ մեր փոխարէն: Այն միայն յիշեցում է մեզ աղօթքի կեանքով վառուելու մասին, որ կատարուում է մեր սրտում: Այսօր մոմը, ինչպէս որ առաջ էր, տաճարը լուսաւորելու միջոց չէ: Այն փոքրիկ զօհաբերութեան մարմնացումն է, որ վառուում է Եկեղեցում: Հաւատացեալի համար Եկեղեցում գնուած մոմը յարգանքի առարկայ է: Աշխարհիկ խանութներից գնուած եւ Եկեղեցի բերուած մոմն այլեւս զօհաբերութիւն չէ:

❖ Եկեղեցում իւրաքանչիւր անդամին խրախուսուում է պաշտամունքի վայր մտնելիս գնել փոքրիկ նուիրաբերական մոմ, վառել այն եւ տեղադրել աւազատեղի մէջ: Կիրակի օրերին, եթէ ցանկանում էք մոմ վառել, ցանկալի է Պատարագից առաջ գալ Եկեղեցի: Տաւալի է տեսնել, թէ ինչպէս այն անձերը, որոնք եկել են Եկեղեցի ուշացած, երբ ամենակարեւոր եւ հանդիսաւոր պահերին ամէն ոք եւ ամէն ինչ սարսում ու դողում է Աստծու ներկայութեան եւ զօրութեան ահից, խախտելով Եկեղեցում վարուելակերպի պարկեշտութիւնը, շեղում են միւս հաւատացեալների ուշադրութիւնը: Եթէ ինչ-որ մէկն ուշանում է արարողութիւնից, թող սպասի նրա աւարտին, իսկ յետոյ, եթէ նման ցանկութիւն ունի, թող մոմ վառի՝ չշեղելով ուրիշների ուշադրութիւնն ու չխախտելով Եկեղեցական

արարողակարգի վայելչութիւնը: Նրանք, ովքեր եկել են Եկեղեցի, ցանկալի է, որ մոմեր դնեն արարողութիւնից առաջ: Լաւ չէ Եկեղեցու արարողակարգը խախտել՝ ծիսակատարութեան ժամանակ մոմեր անցկացնել՝ շեղելով երկրպագուների ուշադրութիւնը: Այդ պարագայում, ուշացողները թող մոմ վառեն արարողութեան աւարտից յետոյ:

❖ Եկեղեցում մոմավառութեան վերաբերեալ մի քանի սխալ պատկերացումներ կան, որոնց մասին մենք պետք է տեղեակ լինենք: Ոմանք ասում են, թէ պետք է իւրաքանչիւր ողջի եւ մահացածի համար առանձին մոմ դնել: Այս սխալ պատկերացումն ուղղելը կարող է նշանակել, որ Եկեղեցին աւելի քիչ եկամուտ կունենայ մոմերի վաճառքից: Երբ մոմ ենք վառում, մենք կարող ենք մէկ մոմով անսահմանափակ յիշատակել ե՛լ ողջերին, ե՛լ մեռեալներին: Կարիք չկայ տարբեր մոմեր վառել՝ աղօթելու ողջերի եւ մահացածների համար: Աստծու համար բոլորն էլ կենդանի են (տե՛ս Դուկ. 20, 38): Ոմանք էլ ասում են, թէ իւրաքանչիւր մոմ ներկայացնում է մէկ անձ: Մենք կարող ենք անսահմանափակ թուով անուններ ունենալ ցանկացած մոմի համար: Ամեն մի անձի համար առանձին մոմ օգտագործելու կարիք չկայ (անկախ նրանից ողջ է թէ մահացած):



Ինչպէս տեսանք, մոմավառութիւնը հոգեւոր շատ իմաստներ ունի: Նրա լոյսը աստուածային լոյսն է, որը Տէր Յիսուս բերեց աշխարհ: Մեղքի եւ տգիտութեան մեջ գտնուող մարդկանց կեանքը խաւար է, որը ցրելու է Փրկիչը: Մոմն իր լոյսի փայլով քշում է շուրջը գտնուող

մեղքի եւ տգիտութեան խաւարը: Ուստի, մոմը խորհրդանշն է այն բանի, որ մարդը զղջում է իր մեղքերի համար եւ պատրաստ է հնազանդուելու Աստծուն:

Քրիստոսի հետ հոգեւոր ճանապարհորդութեամբ մեր կեանքի բոլոր օրերը պարտ ենք դարձնել նոր, որպէսզի մեր կեանքով լոյսի մի ճառագայթ դառնանք խաւարի մէջ խարխափող մարդկութեան համար: Այսպիսով, ընդունենք Քրիստոսի լոյսը մեր սրտերում եւ ամէն օր համարձակ ու քաջաբար կրենք այն: Թող դա միսիթարի մեզ, երբ մենք միայնակ ենք, վիրաւորուած կամ ինչ-որ կերպ թուլացած. եւ թող այն լուսաւորի մեր ճանապարհը դէպի տուն եւ օգնի մեզ, երբ դրա կարիքն ունենք:



WHY DO WE LIGHT A CANDLE IN THE CHURCH

